



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

**№ ԱԽ-3-Ե-7**  
**2017թ.**

**Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՍԱՐՁԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Ա. Սկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բաբայանի, Ռ. Բարսեղյանի,  
Ա. Դարբինյանի, Գ. Խանդանյանի,  
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,  
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,  
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,  
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Շ. Վարդանյանի*

2017 թվականի մարտի 2-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար ՀՀ վճարելի դատարանի նախագահի ներկայացրած թեկնածությունը և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 122-րդ, 123-րդ հոդվածներով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հավանություն տալ ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Լենդրուշ Հրաչյայի Հովհաննիսյանի թեկնածությանը:
2. Լենդրուշ Հրաչյայի Հովհաննիսյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**